

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016 թվականի փետրվարի 28-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Քննաշրջանը և ավարտական կուրսերում լուծարային շրջանը Հեռակա ուսուցման ֆակուլտետում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

**Լսեցին** – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի և ավարտական կուրսերի լուծարային շրջանի մասին /զեկուցող Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանը կազմակերպվել է սահմանված ժամկետներին համապատասխան՝ ըստ հաստատված քննական ժամանակացույցի: Ժամանակացույցը նախապես տեղադրվել է ԳՊՀ պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում, ինչպես նաև փակցվել հայտարարությունների տախտակում: Հեռակա ուսուցման ֆակուլտետում կազմակերպվել է նաև լուծարային շրջան բոլոր ավարտական 5-րդ կուրսերի համար՝ ըստ սահմանված ժամանակացույցի, ինչպես նաև կատարվել են նախապատրաստական աշխատանքներ ավարտական կուրսերի ուսանողների հետ՝ ուսումնական պլաններով սահմանված նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաները պատշաճ ձևով կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ:

**Արտահայտվեցին** – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյանը

Նշվեց, որ ավարտական կուրսերի ուսանողները տարբեր ուսումնական հաստատություններից, իրավաբանական անձանցից ներկայացրել են համաձայնագրեր՝ իրենց նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաները /ուրժ շաբաթ տևողությամբ/ անցկացնելու նպատակով: Նշվեց նաև, որ ԳՊՀ-ի կողմից տրամադրվել են բազմաթիվ գրություններ և տեղեկանքներ համապատասխան ուսումնական հաստատություններում և իրավաբանական կազմակերպություններում ուսանողների պրակտիկան կազմակերպելու նպատակով:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան